

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց ԵԱՀԿ հերթական բրիֆինգին 16.10.2014թ.

Տավուշի մարզպետարանում կայացավ ԵԱՀԿ հերթական բրիֆինգը, որը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը: Բրիֆինգին մասնակցում էին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրշիկը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը, Պիեռ Անդրյուն և համանախագահ Ջեյմս Ուորլիքի օգնականը, ովքեր ժամանել էին Ադրբեջանից՝ հատելով հայ-ադրբեջանական շփման գիծը: Մասնակցում էր նաև Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Բրիֆինգի ընթացքում ԵԱՀԿ պաշտոնյաներին ներկայացվեցին հայ-ադրբեջանական շփման գծում տիրող իրավիճակը, ադրբեջանական զինուժի կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը: